

ԴԻՏԱՐԿՎԵԼ ԵՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

22.08.2014

Համայնքային խնդիրներին, ինչպես նաև մարզպետարանի ու համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպությունների աշխատանքին տեղում ծանոթանալու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է մարզի Մրգաշեն համայնք:

Համայնքի ղեկավար Ա. Արամյանի ուղեկցությամբ Կոտայքի մարզպետը ծանոթացել է տեղի մանկապարտեզի շենքային պայմաններին, ինչպես նաև մանուկների առօրյային և սննդակարգին՝ զրուցելով վերջիններիս հետ:

Այցելության շրջանակներում Ա. Հարությունյանը ծանոթացել է նաև Մրգաշենի միջնակարգ դպրոցում ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ տարվող կազմակերպչական աշխատանքներին, շրջել է դասասենյակներում և գնահատել դպրոցի շենքային պայմանները:

Դպրոցի մանկավարժների հետ հանդիպման ընթացքում Կոտայքի մարզպետը ներկայացրել է մարզպետարանի հստակ դիրքորոշումները աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներն արդյունավետորեն իրականացնելու ուղղությամբ՝ տալով համապատասխան հանձնարարականներ և ընդգծելով, որ նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցը պետք է արձանագրի նորովի հաջողություններ:

Այնուհետև ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը շրջայց է կատարել «Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ում, ծանոթացել շենքային պայմաններին և տեխնիկական հագեցվածությանը:

Բուժաշխատողների հետ հանդիպման շրջանակներում Կոտայքի մարզպետը կարևորել է բնակչությանը մատուցվող ծառայությունների որակական ցուցանիշների բարձրացմանը միտված գործողություններն ու մարզպետարանի հստակ դիրքորոշումը տվյալ հարցի շուրջ:

Մրգաշենի բուժաշխատողներին Կոտայքի մարզպետը հանձնարարել է մշակել և իրագործել նաև առողջապահական ընկերության շարունակական զարգացումն ապահովող ծրագրեր և վերջիններիս իրագործման մեթոդաբանություններ:

Հերթական համայնքային այցելության ավարտին Ա. Հարությունյանը զրուցել է նաև տեղի ազգաբնակչության հետ՝ պատասխանելով նրանց հուզող հարցերին: